ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1071-Ա

ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով, հաշվի առնելով այն, որ 44-օրյա պատերազմում զոհված քաջորդիների ծնողներ՝ Ջիվան Սենոյի Մարտիրոսյանը և Սերյոժա Մանվելի Ոսկանյանը գտնվել են հոգեպես անգիտակից վիճակում և իրենց գործողությունների արդյունքում չեն վնասել շրջակա միջավայրը, չեն վնասել ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ նվիրված հուշաղբյուրը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 44-օրյա պատերազմում զոհված քաջորդիների, ինչպես նաև բոլոր զոհերի հիշատակը հավերժացնող հուշաքարերը տեղադրել են հայրենասիրական նպատակներից դրդված՝ ***որոշում եմ***

Անտառամուտ բնակավայրի բնակիչներ Սենոյի Մարտիրոսյանի և Սերյոժա Մանվելի Ոսկանյանի նկատմամբ ձեռնարկված վարչական վարույթը կարճել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

09 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1072-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Համլետ Սեյրանի Պեպանյանի լիազորված անձ Սուսաննա Սերյոժայի Սարդարյանի դիմումը, «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, չափագրման համաձայնությունը և 2024SB7HAB (16.04.2024թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը, Բազում գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 02.05.1991թ N 02 որոշումից տրված քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, կառուցված շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին՝ ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համայնք, գյուղ Բազում, 48-րդ փողոց, 1-ին նրբանցք, 23 ավտոտնակ հասցեում գտնվող 06-023-0057-0019 կադաստրային ծածկագրով 0,06640 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի, հողամասի վրա առկա շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Համլետ Սեյրանի Պեպանյանի (ծնված՝ 08.05.1962թ.) սեփականության իրավունքը 06-023-0057-0019 կադաստրային ծածկագրով 0.06640 բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա գտնվող մինչև 1992 թ.-ը կառուցված 47,2 ք/մ ընդհանուր մակերեսով ավտոտնակի նկատմամբ:

3.Հողամասի վրա առկա է 37,1 ք/մ ներքին մակերեսով 2007 թ.-ին կառուցված կիսակառույց ինքնակամ անասնաշենք, որի օրինականացումը կկատարվի հետագայում օրենքով սահմանված կարգով:

4.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 04 հուլիսի 2024թվականի N 0794-Ա որոշումը:

5.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

09 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1073-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, հաշվի առնելով Արշակ Սամվելի Քոչինյանի (ծնված 01/01/1981թ.) դիմումը, «Գասպար Վեքիլյան Արշակի» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991թ-ի թիվ 02 որոշումից քաղվածքը , այն հանգամանքը, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ՝ ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համյանքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0369-0013 կադաստրային ծածկագրով 0.63445 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Սամվել Պետրոսի Քոչինյան (ծնված՝ 26.01.1955թ.), Գալյա Վալոդյայի Սանթոյան (ծնված՝ 25.08.1957թ.), Արշակ Սամվելի Քոչինյան (ծնված՝ 01.01.1981թ.) և Քրիստինե Սամվելի Քոչինյան (ծնված՝ 14.07.1982թ) սեփականության իրավունքը 06-070-0369-0013 կադաստրային ծածկագրով 0.63445 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

10 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1074-Ա

ԳԱՐԻԿ ՍՈՒՐԵՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգը սահմանելու մասին» N 920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գարիկ Սուրենի Գևորգյանի լիազորված անձ Վաղարշակ Հովիկի Սաքանյանի 28.08.2024 թվականի դիմումը՝ ***որոշում եմ***

1.Գարիկ Սուրենի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող, Փամբակ համայնքի Բազում բնակավայրում հաշվառված Մերսեդես-Բենս Ե 320 4 մատիք (MERCEDES-BENZ E 320 4 MATIC) մակնիշի, 35NC632 պետհամարանիշի օտարված ավտոմեքենայի գույքահարկի գերավճարը՝ 47064 (քառասունյոթ հազար վաթսունչորս) դրամը հաշվանցել Վաղարշակ Հովիկի Սաքանյանին (անձնագիր AT0402721, տրված 03.03.2020թ. 033-ի կողմից) պատկանող՝ Արդշինբանկ 2479101084370020 հաշվեհամարին:

2.Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետին՝ յոթնօրյա ժամկետում իրականացնել գերավճարի հաշվանցման աշխատանքները:

3. Ուժը կորցրած ճանաչել Փամբակի համայնքի ղեկավարի օգոստոսի 28-ի թիվ 1027-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

10 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1075-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-010-0001-0006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Ազնվաձոր, 3-րդ փողոց, 42 հողամաս փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

10 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1076-Ա

06-070-0038-0039 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՔԱՂՎԱԾՔԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով.***որոշում եմ***

1.Անվավեր ճանաչել 06-070-0038-0039 ծածկագրով անշարժ գույքի կադաստրային գործում առկա նախկինում տրամադրված բոլոր քաղվածքները և 06-070-0038-0039 ծածկագրով անշարժ գույքի կադաստրային գործում հինք ընդունել 06.04.1987թ.-ին կազմված անշարժ գույքի տեխնիկական անձնագիրը, որը առկա է կադաստրային գործում:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

10 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1077-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-070-0100-0013 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Մարգահովիտ, 14-րդ փողոց, 7-րդ նրբանցք, 24 հողամաս փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

10 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1078-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-070-0009-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Մարգահովիտ, 22-րդ փողոց, 1-ին նրբանցք, 2 հողամաս փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

10 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1079-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, Հասատանի Հանրապետության կառավարության 2009թ. Հոկտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ սահմանված կարգով, հաշվի առնելով հողամասի օգտագործման նպատակահարմարությունը, ***որոշում եմ***

Լոռու մարզի Փամբակ համայնքի Եղեգնուտ գյուղի 06-036-0012-0012 կադաստրային ծածկագրից 0,55336 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի գյուղատնտեսական նշանակության խոտհարքի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

11 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1080-Ա

06-107-0033-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Ալբերինա Վազգենի Գալստյանի (ծնված՝ 20.01.1941թ.) դիմումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ըստ օրենքի ժառանգության վկայագրերը, գրանցամատյան՝ 1199, 1198, 1197, 1196, ըստ կտակի ժառանգության վկայագրերը գրանցամատյան՝ 6641, 6642, Գուգարքի շրջանի գործկոմի 03.04.1988թ. թիվ 4 որոշումից քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ. ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համյանքի Փամբակ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-107-0033-0007 կադաստրային ծածկագրով 0,060809 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի հատակագիծը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.06-107-0033-0007 կադաստրային ծածկագրով 0,060809 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Ալբերինա Վազգենի Գալստյանի (ծնված՝ 20.01.1941թ.), Վալերի Վազգենի Գալստյանի (ծնված՝ 24.09.1944թ.), Վիլեն Վազգենի Գալստյանի (ծնված՝ 07.09.1980թ.) և Վարդան Վալերի Գալստյանի (ծնված՝ 17.08.1982թ.) բաժնային սեփականության իրավունքը:

3.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 06 հունիսի 2024 թվականի N 0687-Ա և 19 հուլիսի 2024թվականի N 0828-Ա որոշումները:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

11 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1081-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Փամբակ համայնքի ավագանու 06 ապրիլի 2022 թվականի «ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 32-Ա և 14 նոյեմբերի 2023 թվականի «Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի թիվ 08-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Փամբակ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 129-Լ որոշումներով, հիմք ընդունելով Փամբակ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի կանոնադրությունը, հաշվի առնելով բնակչի դիմումը, Փամբակ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 12 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 16 նիստի եզրակացությունը, ***որոշում եմ***

Փամբակ համայնքի 2024 թվականի բյուջեի մաս 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729-ով նախատեսված գումարից Կարինե Մաթևոսյանի սոցիալապես անապահով ընտանիքին հատկացնել սոցիալական աջակցություն՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

12 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1082-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով, հաշվի առնելով Ռեդիկ Սամսոնի Գոգչյանի (ծնված՝ 14/11/1935թ.) դիմումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագիծը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991թ-ի թիվ 02 որոշումից քաղվածքը , այն հանգամանքը, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, կառուցված շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին՝ ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համայնք, գյուղ Մարգահովիտ, 10-րդ փողոց, 20 բնակելի տուն հասցեում գտնվող 06-070-0051-0021 կադաստրային ծածկագրով 0, 20302 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա առկա շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Ռեդիկ Սամսոնի Գոգչյանի (ծնված՝ 14/11/1935թ.) և Նունե Լյուդվիգի Անտինյանի (ծնված՝ 20/05/1974թ.) սեփականության իրավունքը 06-070-0051-0021 կադաստրային ծածկագրով 0,20302 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա գտնվող՝ մինչև 2001թ-ը կառուցված 221,5 ք/մ ընդհանուր մակերեսով բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ:

3.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 19 օգոստոսի 2024 թվականի N 0992-Ա որոշումը, 06-070-0051-0021 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի կադաստրային գործում առկա նախկինում տրամադրված բոլոր քաղվածքները և 06-

070-0051-0021 ծածկագրով անշարժ գույքի կադաստրային գործում հիմք ընդունել համայնքի ղեկավարի կողմից 12.09.2024թ-ի տրված ճշտված քաղվածքը:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

12 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1083-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-023-0101-0008կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Բազում, 1-ին փողոց, 29/4 հողամաս փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

13 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1084-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-070-0029-0011 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Մարգահովիտ, 2-րդ փողոց, 5 բնակելի տուն փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

13 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1085-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով Ռուզաննա Սաշայի Գրիգորյանի (ծնված՝ 18.04.1964թ.) դիմումը՝ ինքնակամ կառույցի օրինականացման մասին, հաշվի առնելով վերջինիս համաձայնությունը՝ գնման նախապատվության իրավունքով Լոռու մարզի Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրում գտնվող 06-070-0302-0005 ծածկագրով 0,11343 հա հողամասը և 113,1 քմ արտաքին մակերեսով պարիսպը և հարթակը գնելու մասին ***.որոշում եմ***

1.ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականություն ճանաչված և օրինականացված (անշարժ գույքի գրանցման թիվ 16082024-06-0011 վկայական), այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, Ռուզաննա Սաշայի Գրիգորյանի կողմից համայնքային սեփականութուն հանդիսացող ՀՀ Լոռու մարզ Փամբակ համայնք, գյուղ Մարգահովիտ, 8-րդ փողոց, 39/1 պարիսպ փոստային հասցեով 06-070-0302-0005 ծածկագրով 0,11343 հա, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը՝ գործող կադաստրային արժեքով՝ 1000*475,2=475200 /չորս հարյուր յոթանասուն հինգ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամով, յուրաքանչյուր 1 ք/մ ը 475,2 ՀՀ դրամով, 134,3*1425,6=191460/ մեկ հարյուր տասնչորս հազար վաթսուն/ ՀՀ դրամով, յուրաքանչյուր 1 քմ 1425,6 ՀՀ դրամով և ինքնակամ կառուցված ընդհանուր 113,3 քմ արտաքին մակերեսով պարիսպը և հարթակը՝ 113,1*2056=232534 /երկու հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր

երեսունչորս/ ՀՀ դրամով, յուրաքանչյուր 1 քմ 2056 ՀՀ դրամով, ընդամենը՝ 899 194 ՀՀ դրամ արժեքով, գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով օտարել Ռուզաննա Գրիգորյանին:

2.Պարտավորեցնել Ռուզաննա Գրիգորյանին համայնքի ֆոնդային բյուջե վճարել 666660 ՀՀ դրամ հողի օտարումից եկամուտներ 900235422137 հաշվեհամարին, 232534 ՀՀ դրամ ինքնակամ կառույցների օրինականացման 900235422301 հաշվեհամարին, սույն որոշման 1-ին կետում նշված գույքերի օտարման արժեքը և կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

13 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1086-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-023-0067-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Բազում, 6-րդ փողոց, 10 հողամաս փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

13 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1087-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԱԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Արշակունի Գևորգի Հովհաննիսյանի (ծնված՝ 21.01.1950թ.) դիմումը, «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Ձորագյուղ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.04.1991թ-ի թիվ 01 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության վկայագիրը՝ գրանցամատյան՝ 211/24, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համայնք, գյուղ Ձորագյուղ, 4-րդ փողոց, 7/1 բնակելի տուն հասցեում գտնվող 06-066-0015-0038 կադաստրային ծածկագրով 0,20403 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա առկա շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Արշակունի Գևորգի Հովհաննիսյանի (ծնված՝ 21.01.1950թ.) սեփականության իրավունքը 06-066-0015-0038 կադաստրային ծածկագրով 0,20403 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա գտնվող՝ մինչև 2001թ-ը կառուցված 261,6 ք/մ ընդհանուր մակերեսով բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ:

3.Հողամասի վրա առկա է 2007 և 2015 թ-ին ինքնակամ կառուցված 175,9 ք/մ ընդհանուր մակերեսով անասնաշենք, որի օրինականացումը կկատարվի հետագայում օրենքով սահմանված կարգով:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

13 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1088-Ա

06-070-0048-0126 ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՈՒՂՂԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով,ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշմամբ հաստատված կարգով,«Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Արմեն Նորայրի Բոջուկյանի (ծնված՝16.05.1977թ.)դիմումը, ըստ օրենքի ժառանգության վկայագիրը՝ գրանցամատյան՝ 4844 «Տարոն Սերոբյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991թ N-2 որոշումից քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ.***որոշում եմ***

1.Առաջնորդվելով ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թվականի ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թվականի թիվ 698-Ն որոշման 3-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ 06-070-0048-0126 ծածկագրով հողամասի սահմանները Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի կադաստրային քարտեզում սխալ է և համադրվում է 06-070-0048-0124 կադաստրային ծածկագրով հողամասի հետ, որի սեփականատիրոջ կողմից կա գրավոր համաձայնություն այն մասին, որ տվյալ հողամասից համադրվող հատվածը և հողամասի վրա առկա անասնագոմը իրենց չի պատկանում այլ պատկանում է Արմեն Նորայրի Բոջուկյանին և իր ընտանիքին, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ըստ 06-070-0048-0124 ծածկագրով անշարժ գույքի սեփականության վկայագրում առկա հատակագծի հողամասից համադրվող հատվածը և հողամասի վրա առկա անասնագոմը ներառված չէ 06-070-0048-0124

ծածկագրով հողամասի սահմաններում՝ հողամասի սահմանները հաստատել համաձայն «Տարոն Սերոբյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագծի սահմանային չափերի, իսկ տեղադրման արդյունքում առաջացող համադրումները ուղղել տրված հատակագծի համաձայն, որպես կադաստրային քարտեզի սխալի ուղղում:

2.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Արմեն Նորայրի Բոջուկյանի (ծնված՝ 16.05.1977թ.), Հրանուշ Կարապետի Բոջուկյանի (ծնված՝ 03.01.1953թ.)և Արտակ Նորայրի Բոջուկյանի (ծնված՝ 01.11.1978թ.)բաժնային սեփականության իրավունքըԼոռու մարզ Փամբակ համայնք գ. Մարգահովիտ 4-րդ փողոց 17 բնակելի տուն հասցեում գտնվող 06-070-0048-0126 կադաստրային ծածկագրով 0,11189 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա առկա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված 156.4 ք/մ ընդհանուր մակերեսով շինությունների նկատմամբ:

3.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 18 ապրիլի 2022 թվականի N 241-Ա որոշումը 06-070-0048-0126 ծածկագրով անշարժ գույքի կադաստրային գործում առկա նախկինում տրամադրված բոլոր քաղվածքները և 06-070-0048-0126 ծածկագրով անշարժ գույքի կադաստրային գործում հիմք ընդունել համայնքի ղեկավարի կողմից 13.09.2024թ-ի տրված ճշտված քաղվածքը:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

13 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1089-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-034-0068-0007 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Դեբեդ, 5-րդ փողոց, 4-րդ նրբանցք, 41 բնակելի տուն փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

13 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1090-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 13-րդ կետի բ),ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգով քանի որ կառույցները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Վարուժան Վանիչկայի Հակոբյանի (ծնված՝ 15.02.1968 թ.) դիմումը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, չափագրման համաձայնությունը և 2024UAYZTP մուտքագրման ծածկագրով տեղեկանքը՝ ***որոշում եմ***

1.Հաստատել Լոռու մարզ, Փամբակ համայնք գյուղ Դեբեդ, 5-րդ փողոց, 4-րդ նրբանցք, 41 բնակելի տուն հասցեում գտնվող 06-034-0068-0007 ծածկագրով 0.23299 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի, հողամասի վրա առկա շինությունների չափերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Օրինականացնել Լոռու մարզ, Փամբակ համայնք գյուղ Դեբեդ, 5-րդ փողոց, 4-րդ նրբանցք, 41 բնակելի տուն հասցեում գտնվող Վարուժան Վանիչկայի Հակոբյանին, Վրեժ Վարուժանի Հակոբյանին, Մելանյա Վարուժանի Հակոբյանին, Սուսան Եղինյանին սեփականության իրավունքով պատկանող (վկայական՝ N 1744821) 06-034-0068-0007 ծածկագրով 0.23299 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում վերջիններիս կողմից ինքնակամ կառուցված այլ անձանց իրավունքներն

ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, 2017թ.-ին կառուցված ընդհանուր 115.75 ք/մ արտաքին չափերով բնակելի տունը:

3.Պարտավորեցնել Վարուժան Վանիչկայի Հակոբյանին, Վրեժ Վարուժանի Հակոբյանին , Մելանյա Վարուժանի Հակոբյանին, Սուսան Եղինյանին (հաշվեհամար՝ 900235422301 ինքնակամ կառույցի օրինականացում) վճարել 2017թ.-ին կառուցված ընդհանուր 115.75 քմ արտաքին չափերով բնակել տան օրինականացման վճարը՝ 62050 ՀՀ դրամ :

4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

13 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ